ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Խոջայան /_____/

« » ---------- թ.

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

«Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց»
IX Ա դասարան
ուսումնական հաստատության անվանումը , դասարանը

Լիլիթ Կարապետյան
դասղեկի անունը, հայրանունը, ազգանունը,

«2023-2024» ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) IX ա դասարանում սովորում է 28 աշակերտ՝ 14 աղջիկ, 14 տղա: Նախորդ ուսումնական տարին գերազանց առաջադիմությամբ ավարտել է 7 աշակերտ: Դասարանում մեծ թիվ են կազմում ջանասիրաբար աշխատող աշակերտները, որոնք ձգտում են գերազանցության: Դասարանում ձևավորված է խումբ, առակա է ջերմ, ընկերասեր մթնոլորտ: Բոլոր աշակերտները համախմբված են: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանն ունի ուսման առաջադիմության բարձր ցուցանիշ: Միմյանց միջև ջերմ և դրական մթնոլորտ է՝ լի սիրով և հանդուրժողականությամբ: Դասավանդող ուսուցիչները իրենց աշխատանքը դասարանում սիրով են կատարում: Աշակերտները պարտաճանաչ են, մեծ պատասխանատվությամբ են վերաբերում բոլոր առարկաներին, համերաշխ են, հարգում և հետևում են դպրոցի ներքին կարգապահական կանոններին, դպրոց են հաճախում անհրաժեշտ ուսումնական պարագաներով, բացակայությունները շատ չեն:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական ա/ Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն բ/ Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն , համակարգում , կարգավորում գ/ Դասարանական կոլեկտիվի կենսագործունեության փուլերի / կիսակյակ / և միջոցառումների պլանավորում , նախապատրաստում , իրականացում արդյունքների ամփոփում , վերլուծություն / դասղեկական ժամեր , միջոցառումներ և այլն / դ/ Աշխատանք ծնողների հետ ե/ Մանկավարժական աջակցություն աշակերտներին զ/ Դասամատյանի , աշակերտական օրագրի և այլ փաստաթղթերի վարում / էլեկտրոնային / է/ Կիրառել արդյունավետ մեթոդներ՝ դասերը ժամանակին պատրաստելու համար:

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է սահմանել սովորողների հաճախումների , առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկողություն, համագործակցել ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն Աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի ազգային ավանդույթներին, հոգևոր արժեքներին, նիստուկացին և մտածելակերպին: Այդ նպատակով աշակերտներին ծանոթացնել եկեղեցական ծեսերին, տոներին: Մասնակցել եկեղեցիական տոներին նվիրված միջոցառումների: Կարևորել բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, կարողանան գնահատել գեղեցիկը, բարին, ճշմարիտը: Զերծ մնան վատ արարքներից, լինեն մարդասեր, ընկերասեր, հանդուրժող: Անցկացնել անհատական զրույցներ աշակերտների հետ: Աշակերտների հետ վարել զրույց ,,Առաքելական եկեղեցու դերը և նշանակությունը հայի կյանքում՛՛ թեմայով:Կազմակերպել ընթերցումներ, քրիստոնեության վերաբերյալ ֆիլմի դիտումներ, այցելություններ դեպի առաքելական եկեղեցիներ:Ծանոթացնել բոլոր քրիստոնեական տոների հետ և կազմակերպել ցուցահանդես: Կարևորել բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, կարողանան գնահատել գեղեցիկը, բարին, ճշմարիտը: Զերծ մնան վատ արարքներից, լինեն մարդասեր, ընկերասեր, հանդուրժող: Անցկացնել անհատական զրույցներ աշակերտների հետ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է աշակերտներին սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու հոգևոր հարստություն , բարություն , և դրա հիման վրա նրանց մեջ արմատավորելու գեղեցիկը : Գիտակցական վերաբերմունք ձևավորել մշակույթի գեղարվեստական արժեքների նկատմամբ : Գեղանկարչության և երաժշտության միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի մարդու կյանքում: Լսել աշակերտի կարծիքը, մասնակից դարձնել նրան արվեստին ու մշակույթին: Ծանոթացնել հայկական ճարտարապետությանը: Այս խորագրի շրջանակներում անցկացնել զրույցներ գեղագիտական արժեքների, գեղեցիկը գնահատելու մասին: Շարունակել այցելել թանգարաններ, մշակութային օջախներ: Լինել բնության գրկում, ճանաչել գեղեցիկը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Իմանան մեր երկրի պատմական անցյալը, ճանաչեն հերոսներին, հարգեն Հայաստանի պետական խորհրդանիշերը, իմանան պետական տոները, լինեն հայրենասեր և ազգասեր: Գիտակցեն իրենց տեղն ու դերը հասարակության մեջ: Այս պատերազմական իրավիճակում պիտի երեխայի մոտ հայրենասիրություն սերմանել և բացատրել , որ յուրաքանչյուրս պիտի ծանոթ լինի ռազմական արվեստին, հայրենիքը բացարձակ արժեք է: Երեխայի մոտ դաստիարակել հայրենիքին անշահախնդիր ծառայելու , ակտիվ աշխատանքային և հասարակական գործունեության նկատմամբ ձգտում: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունը՝ աշակերտների մոտ ձևավորել ռազմա - հայրենա սիրական որակներ ու ամրապնդել :

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Սովորեցնել կարևորել ֆիզիկական ակտիվության դերը մկանների զարգացման գործում և ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտի նկատմամբ; Խոսել առողջ ապրելակերպի, անձնական հիգիենայի մասին:Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Աշակերտների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտային պարապմունքների նկատմամբ:

Հիմնական խնդիրներն են `

1. աշակերտի ներդաշնակ ֆիզիկական զարգացում
2. բարոյական բարձր հատկանիշների զարգացում
3. շարժողական հատկությունների մշակում որպես կարգախոս ունենալով ´´ Առողջ մարմնում ` առողջ հոգի ´´ բանաձևը , խրախուսել սպորտով զբաղվողներին և հետևել նրանց հաջողություններին

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը: Աշխատանքային դաստիարակության միջոցով աշակերտը պետք է փորձի ինքնահաստատվել մտերմանալ մեծահասակների հետ, համագործակցել , սովորել պլանավորել ու վերահսկել սեփական գործողությունները, ձեռք բերի կյանքի հմտություններ: Սերմանել սեր դեպի շրջակա միջավայրի, դպրոցի, դասարանի մաքրության ապահովումը աշակերտների միջոցով և օգնությամբ: Նրանց մեջ ձևավորել հարգանք դեպի ուրիշի կատարած աշխատանքի հանդեպ:Մասնակցել համադպրոցական շաբաթօյակներին և ծառատունկին: Կարևորել աշխատանքի դերը մարդու կյանքում, դրական վերաբերմունք ձևավորել աշխատանքի նկատմամբ, իմանալ աշակերտների նախասիրությունները, օգնել մասնագիտական կողմնորոշմանը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Աշակերտին պետք է բացատրել ,որ ինքը բնության մի մասնիկն է և պարտավոր է խնամքով վերաբերվել բնությանը: Յուրաքանչյուր գիտակից մարդ պիտի հասկանա, որ բնապահպանական խնդիրները կարևորագույնն են: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում: Սովորողները պետք է կարողանան լուծել իրենց շրջապատին վերաբերող հիմնահարցերը, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները: Տարվա ընթացքում մասնակցել ծառատունկի և բնապահպանական միջոցառումների:

4.Դպրոց-ընտանիք կապը Մանկավարժներն ու ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխաներին տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Երեխան պետք է հասկանա, որ ընտանիքը մարդու կյանքում գլխավոր դերում է: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտներն ավելի լավ սովորեն:Ամուր պահել ծնող-երեխա-դասղեկ-ուսուցիչ կապը: Ներգրավել ծնողներին դասարանական միջոցառումենրի կազմակերպմանը: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	ա) Աշխատանքային պլանի կազմում բ) Դասարանական անկյան ձևավորում գ) Ծնողական ժողովի անցկացում դ) Ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին: ե) Զրույց նոր ուսումնական տարին հաջող և բարձր առաջադիմությամբ սկսելու մասին: զ) Հերթապահություն դասարանում Է) Դ/Ժ «Նոր ուսումնական տարի... նոր հույզեր, նոր հույսեր ու սպասումներ»:		Դասղեկ Աշակերտներ Ծնողներ
II	ա) Դասարանի սոցիալապես անապահով, ծնողազուրկ երեխաների հաշվառում և ցուցակի կազմում: բ) Դասարանական խորհրդի ձևավորում: դ) Դ/Ժ «Աշխարհն իմ պատուհանից: »:		Դասղեկ Աշակերտներ
III	Դ/Ժ << Հայասանի անկախությունը գերագույն արժեք է>>: Անկախության անգնահատելի դերն ինձ համար: Ապրիլյան, 44 - օրյա պատերազմի անջնջելի ցավոտ էջերի վերլուծություն: Հոգևոր դաստիարակության շրջանակում զրույց հոգևոր տոների մասին՝ Խաչվերաց, Թարգմանչաց և մյուս տաղավար տոների շուրջ:		Դասղեկ Աշակերտներ

IV	1. Դասասենյակի հիմնավոր մաքրում 2 .Դասարանի սանիտարական վիճակի պահպանում: 3. Կլոր սեղան՝ Պատերազմական իրավիճակում հոգետրավմա ապրող երեխաներին մանկավարժական աջակցությաան ցուցաբերման ձևեր! 4. . Դ/Ժ «Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ»:		Դասղեկ Աշակերտներ
V	ա)Դասարանի սանիտարական վիճակի պահպանում: բ) Դասգրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության ստուգում: գ) Մասնակցել ուսուցչի օրվան նվիրված միջոցառումներին <<Շնորհավոր տոնդ, սերունդ կրթող ամենակարող ուսուցիչ>>: դ) Դ/Ժ զեկույց<< Ուսուցիչ, ում ես շնորհակալ եմ այն բանի համար, որ նա ... >>: Բացիկների պատրաստում ե) Գրադարանավարի օր 1. <<Գրադարան՝ գիտելիքի դարբնոց >> :		Դասղեկ ԴԱԿ, ԱԽ
VI	ա)Ծնողներիններին գրավել դաստիարակչական աշխատանքներում՝ծնող-ուսուցող, ծնող-խորհրդատու: բ) Շնորհալի աշակերտների ցուցաիկի կազմում: գ)Այցելություն Սուրբ Աստվածածին եկեղեցի: դ) Աշխատանքի անհրաժեշտությունը: դաս/ժամ «Ֆիզիկական ակտիվությունը՝ առողջ լինելու գրավական»:		Դասղեկ Աշակերտներ
VII	ա)Դասագրքերի վիճակի ստուգում: բ) Դ/ժ «Խաղաղությունը ժպիտից է սկսվում»: գ)Անցկացնել դասղեկի դասալսում:		Դասղեկ Աշակերտներ

VIII	ա)Համագործակցություն ծնողների հետ՝ ուսումնադաստիարակչական խնդիրները կարգավորելու նպատակով: բ) « Մասնագիտական կողմնորոշում: Ես՝ ապագայում» դ/ժ : գ) Ուսուցողական խաղ.՝« Ճանապարհային երթևեկություն»:		Դասղեկ Աշակերտներ
IX	ա) << Աշնանային անուրջներ >> պոեզիայի ժամ: բ) Աշխատանք անհարգելի բացակայող և հաճախ ուշացող աշակերտների ծնողների հետ: գ) Դ/Ժ « Աշունը գույն է»:		Դասղեկ Աշակերտներ
X	ա)Դասագրքերի վիճակի ստուգում: բ) Դ/Ժ «Բարոյական արժեքներ, որոնք իմաստավորում են մեր կյանքը»:		Դասղեկ Աշակերտներ
XI	ա) Զրույց դասարանի ակտիվի կազմի և դասարանական խորհրդի հետ: բ) Սեմինար քննարկում << Զինվորական մասնագիտությունը >> Զինղեկ գ) Դ/ժ << Դժվարություններ, որոնց բախվում եմ»:		Դասղեկ Աշակերտներ Զինղեկ
XII	ա) Դասարանական անկյան թարմացում: բ) << Վստահ քայլեր դեպի ապագա>> խորագրով միջոցառում՝ նվիրված հաշմանդամների միջազգային օրվան : գ) Աշխատանք անհարգելի բացակայող և հաճախ ուշացող աշակերտների ծնողների հետ: գ) Դ/Ժ - «Գեղեցիկն ու տգեղը իմ կյանքում»: դ) «Ես քեզ սիրում եմ կյանք» խորագրով ցերեկույթ՝ նվիրված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միջազգային օրվան:		Դասղեկ Աշակերտներ

XIII	ա) Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ: 1. Շարժական վահանակի ձևավորում «33 տարի առաջ...» 2. կինոդիտում բ) Մարդու իրավունքների օրը դպրոցում 1. Զրույց՝< Ով իրազեկված է, նա պաշտպանված է>թեմայով: 2. Կինոդիտում՝«Թրաֆիքինգ՝ սպիտակ ստրկություն կամ մարդկանց շահագործում»: գ) դ/ժ «Բնական աղետներ.ինչպես պաշտպանվել դրանցից»: դ) Աշակերտների առաջադիմության գնահատում:		Դասղեկ Աշակերտներ
XIV	ա) Դասասենյակի նախապատրաստում Նոր տարվան: բ) Դ/Ժ - « Խոսքի ուժը»: գ)Դաստիարակության դրական մոտեցումների հիմնական սկզբունքները: դ) Ամանորյա բացիկների պատրաստում:		Դասղեկ Աշակերտներ
XV	ա) Զրույց՝ «Եղևնու տոնական խորհուրդը» թեմայով:		Դասղեկ
	բ) Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին: գ)) Դ/Ժ - « Տոն, որ միշտ մեզ հետ է…»: դ) Ծնողական ժողով /կիսամյակային գնահատականների ամփոում/:		Աշակերտներ
XVI	ա) Զրույց դասարանի ակտիվի կազմի և դասարանական խորհրդի հետ : բ)Ծիսական միջոցառում՝<< Նավասարդյան>> գ) «Ամանորյա տպավորությունները» թեմայով զրույց դ/ժ:		Դասղեկ Աշակերտներ
XVII	ա) Դպրոցականդասագրքերիաշակերտականպիտույքների ստուգում: բ) 2-րդ կիսամյակի անելիքները: 3) Հերթապահության կազմակերպում: Դ/ժ «Մենք բոլորս տարբեր ենք»:		Դասղեկ Աշակերտներ
XVIII	ա) Դասագրքերի վերանորոգում: բ) Մասնակցել հայոց բանակի կազմավորմանը նվիրված համադպրոցական միջոցառումներին: գ)Կազմակերպել կինոդիտումներ, ռեֆերատների մրցույթ: դ) «Բանակը պետության ամրոցն է» դ/ժ :		Դասղեկ Աշակերտներ

XIX	ա) Հարստացնել դասարանական անկյունը: Հետևել աշակերտներիսանիտարահիգիենիկ վիճակին: բ) Տեղեկատվական ակցիա «Ապահով համացանց»: «Մեկ օր առանց ինտերնետի» դ/ժ :		Դասղեկ Աշակերտներ
XX	ա) Զրույց՝Ծնող - երեխա փոխհարաբերությունները¦թեմայով: բ) Սովորական ցեղասպանություն .Սումգայիթ-1988թ ¦ փաստագրական ֆիլմի դիտում և քննարկում: գ)Այցելություն քաղաքային գրադարա դ) «Խաղաղության ճանապարհին կորցրեցին» դ/ժ :		Դասղեկ Աշակերտներ
XXI	ա)Հետևել աշակերտների արտաքին տեսքին, սանիտարագիգիենիկ վիճակին: բ) Թումանյանական շունչը մեր դասարանում: գ) Գիրք նվիրելու խորհուրդը: Այցելություն քաղաքային գրադարան: դ) Դ/ժ «Կարդա, որ բարձրանաս»:		Դասղեկ Աշակերտներ
XXII	ա)Զրույց՝նվիրված աշխատանքին, արհեստներին: բ) Ցերեկույթ՝ “Snt Valentins Day” գ) Դասարանի հիմնավոր մաքրում: դ) Դ/ժ «Սիրում եմ...Սիրո ուժն անհաղթ է»:		Դասղեկ Աշակերտներ
XXIII	ա) Գարունը մեր դասարանում: բ) Դ/ժ « Գարունը մեր աչքերով»: Իմ կյանքի 15-րդ գարունը:		Դասղեկ Աշակերտներ
XXIV	ա) Կանանց տոնին նվիրված տոնական բացիկների պատրաստում: բ) Կանանց տոնին նվիրված միջոցառումներ. Շնորհավոր Ձեր տոնը ,հերոսա ծի՛ն հայ մայրեր ¦խորագրով ֆլեշ-մոբ : գ) Դ/ժ «Կինը երջանկության հրավեր է»:		Դասղեկ Աշակերտներ
XXV	ա) Համագործակցություն զուգահեռ դասարանցիների հետ: բ) Ð³Ù³·áրÍ³ÏóáõÃÛáõÝ ¹³ë³í³Ý¹áÕ áõëáõóÇãÝ»ñÇ Ñ»ï: գ) Դպրոցական դասագրքերի ստուգում: Դ/ժ «Հագուստի կուլտուրա:		Դասղեկ Աշակերտներ Դասղեկ Աշակերտներ
XXVI	ա) Ընթացիկ առաջադիմությանը և կարգապահությանը վերաբերվող հարցերի քննարկում: բ) Դ/ժ «Ժպիտը մարդու կյանքում»:		Դասղեկ Աշակերտներ

XXVII	ա) Դասասենյակի հիմնավոր մաքրում: բ) Անցկացնել զրույց «Ապրիլի 7-ը մայրության և գեղեցկության» տոնն է թեմայով : գ) Դ/ժ «Մայր՝ գարնան և սիրո հմայք»:		Դասղեկ Աշակերտներ
XXVIII	ա)Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին: բ) «Ծառը ժպտում է և սեր տարածում» դ/ժ: գ) «Սուրբ Հարության տոն»		Դասղեկ Աշակերտներ
XXIX	ա)Ինչպե՞ս օգնել դեռահասին հաղթահարել տարիքային ճգնաժամը>> սեմինար-քննարկում: Հայոց Մեծ եղեռն բ) «Բռնությունը թույլերի զենքն է» դ/ժ:		Դասղեկ Աշակերտներ
XXX	ա) Աշխատանք հետ մնացող աշակերտների հետ: բ) Դ/ժ «Համակարգիչը և ես»: ՏՀՏ-ների դերը աշակերտների կյանքում:		Դասղեկ Աշակերտներ
XXXI	ա) Աշխատանք դասարանի ակտիվի հետ: բ) Դասագրքերի ստուգում: գ) Դ/ժ «Մայիս՝ հաղթանակների ամիս»:		Դասղեկ Աշակերտներ
XXXII	ա) Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին : բ) ²ßË³ï³Ýù³ÛÇÝ ï»ïñ»ñÇ,ëïáõ·áõÙ և դասագրքերի վիճակի ստուգում:		Դասղեկ Աշակերտներ
XXXIII	ա) Կարգապահական հարցերի քննարկում: բ) Նախապատրաստել դասագրքերը դպրոցական գրադարանին հանձնելու համար:		Դասղեկ Աշակերտներ
	գ) «Ինչ տվեցին ինձ իմ դպրոցական 9 տարիները:» դ/ժ:		
XXXIV	ա) Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում: բ) Ծնողական ժողովի անցկացում, էքսկուրսիայի կազմակերպում, տարեվերջյան տոնակատարություններ: գ) Դ/ժ «Դպրոցական վերջին զանգ: Ի՞նչ խորհուրդ ունի այն»: «Վերջին դաս » հրաժեշտ դպրոցին:		Դասղեկ Աշակերտներ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	Միջոցառման բովանդակությունը	Ծանոթություն
	«Նոր ուսումնական տարի... նոր հույզեր, նոր հույսեր ու սպասումներ»:	
	«Աշխարհն իմ պատուհանից»:	
	«Հայասանի անկախությունը գերագույն արժեք է»:	
	«Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ»:	
	«<< Ուսուցիչ, ում ես շնորհակալ եմ այն բանի համար, որ նա... »:	
	«Ֆիզիկական ակտիվությունը՝ առողջ լինելու գնավական»:	
	«Խաղաղությունը ժպիտից է սկսվում»:	
	«Մասնագիտական կողմնորոշում: Ես՝ ապագայում»:	
	« Աշունը գույն է»:	
	«Բարոյական արժեքներ, որոնք իմաստավորում են մեր կյանքը»:	
	«Դժվարություններ, որոնց բախվում եմ»:	

	«Գեղեցիկն ու տգեղը իմ կյանքում»:	
	««Բնական աղետներ.ինչպես պաշտպանվել դրանցից»:	
	«Խոսքի ուժը»:	
	« Տոն,որ միշտ մեզ հետ է…»:	
	«Ամանորյա տպավորությունները» թեմայով զրույց:	
	«Մենք բոլորս տարբեր ենք»:	
	« Բանակը պետության ամրոցն է»:	
	«Մեկ օր առանց ինտերնետի»:	
	« Խաղաղության ճանապարհին կորցրեցի»:	
	«Սիրում եմ... Սիրո ուժն անհաղթ է»:	
	«Կարդա, որ բարձրանաս»:	
	«Գարունը մեր աչքերով... Իմ կյանքի 15-րդ գարունը»:	
	« Կինը երջանկության հրավեր է»:	
	«Հազուստի կուլտուրա»:	

	«Ժպիտը մարդու կյանքում»:	
	«Մայր՝ գարնան և սիրո հմայք»:	
	«Ծառը ժպտում է և սեր տարածում»:	
	«Բռնությունը թույլերի զենքն է»:	
	«Համակարգիչը և ես, ՏՀՏ-երի դերը աշակերտների կյանքում»:	
	«Մայիս՝ հաղթանակների ամիս»:	
	« Ինչ տվեց ինձ իմ դպրոցական 9 տարիները»:	
	«Դպրոցական վերջին զանգ, ի՞նչ խորհուրդներ ունի այն»:	

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Երեքշաբթի	Ժամը 14:55-ին		